ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«17» մարտ 2021թ. No 836 - Ա

Ընդհանուր բաժին
№ 0921
1 8 MAR 2021
Կից Նշում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103018521 առ 26.02.2021թ փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 2 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի, բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրիելյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

Մուտք. 18.03.21 ժ. 10²⁰ Թ.

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

17.03.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2021թ. մարտի 17-ի N 836 – Ա հրամանի

# ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

| հ | Առևտրային անվանում | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | դեղաձև | դեղաչափը և թողարկման ձև (փաթեթավորում) | արտադրող ֆիրմա | երկիր | գրանցման հավաստագրի իրավատեր | երկիր | բացթողման կարգ | եզրակացու-թյան համար և ամսաթիվ | Գրանցման ընթացակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| . | Ցեֆազոլին-Բելմեդ | ցեֆազոլին (ցեֆազոլին նատրիում) | դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի | 500մգ; (1) ապակե սրվակ, (20) ապակե սրվակներ, (40) ապակե սրվակներ | Բելմեդպրեպարատի ՀՈՒԶ, Գրոդնինսկի, 231286, Լիդա, փ. Կաչանա, 19/8- որակի և բաց թողնման հսկող, Բելմեդպրեպարատի ՀՈՒԶ, Գրոդնինսկի, 231286, Լիդա, փ. Կաչանա, 19/8, N18, Բելառուս- բալք արտադրող, փաթեթավորորող | Բելառուս | Բելմեդպրեպարատի ՀՈՒԶ, 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ., 30 | Բելառուս | Դ | 19665 26.02.2021 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| :. | Մոքսի-Տեք | մոքսիֆլօքսացին (մոքսիֆլօքսացինի հիդրոքլորիդ) | ակնակաթիլներ | 5մգ/մլ; (1) պլաստիկե սրվակ-կաթոցիկ 5մլ | ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111 | Հայաստանի Հանրապետություն | ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 19666 26.02.2021 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |